Հադրութից... *Լուսանկար՝ Լ. ԱՐՄԵՆՅԱՆԻ*

«Բռնագաղթվածները պահանջում են իրենց տուն վերադարձնել», ասում է Խորհրդարանի փոխնախագահը

ՀԱՏՈՒԿ «ԱԶԳ»ի ՀԱՄԱՐ

Մայիսի 17-ից Գորիսի շրջանում են գտնվում Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության եւ կառավարության ներկայացուցիչները: Նրանք մեկնել էին Արցախի Հադրութի շրջանից եւ Բերդաձորից տեղահանված եւ ժամանակավոր ճամբարներում հանգրվանած մեր հայրենակիցների հետ տարվող աշխատանքները կոորդինացնելու նպատակով: Մայիսի 20-ին Գորիսի շրջանից վերադարձավ Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի փոխնախագահ **Բաբկեն Արարքյանը**: Նրան խնդրեցինք պատասխանել մի քանի հարցերի:

Հ.- Ինչպիսի՞ն է այսօր տեղահանվածների վիճակը:

Պ.- Այսօր տեղակայված են երկու ճամբար, մեկը՝ Խնձորեսկ գյուղի մոտակայքում, որի մեծամասնությունը կազմում են հադրուցիները, մյուսը՝ Տեղ գյուղի մոտ, ուր հանգրվանել են բերդաձորցիները: Առաջին օրերին անօթեւան մնացած մարդիկ ստիպված տեղավորվել էին դաշտում, սակայն հիմա խփվել են վրաններ, մարդկանց տաք սնունդ է տրվում, գյուղացիներն էլ, իհարկե, մեծ օգնություն են ցույց տալիս նրանց, կանանց եւ երեխաների մի մասին վերցրել են իրենց տները:

Այդ ճամբարները, ըստ էության, գաղթականների դասական ճամբարներ են:

Հայաստանի պատգամավորների հետ միասին այդ ճամբարներում էին գտնվում նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Գեւորգ Վարդանյանը եւ տեղակալ Կտրիճ Սարդարյանը: Նրանք կազմակերպեցին մարդկանց անհրաժեշտ օգնություն ցույց տալու հետագա աշխատանքները: Մեքենաներով Երեւանից առաքվում են վրաններ, սննդամթերք, առաջին անհրաժեշտության այլ առարկաներ: Պետք է նշեմ, որ տեղահանվածների մեծամասնությունը պահանջում է իրենց անհապաղ տուն վերադարձնել, մարդիկ չեն կորցնում հույսը:

Հ.- Իսկ ինչպիսի՞ն է ԽՍՀՄ դեկավարության կեցվածքը տեղահանվածներին իրենց բնակավայրերը վերադարձնելու վերաբերյալ:

Պ.- Ինչպես գիտեք, Հայաստանի իշխանությունները բազմիցս դիմել են ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությանը տեղահանվածներին իրենց ցանկությամբ մշտական բնակավայրերը վերադարձնելու պահանջով: ԽՍՀՄ անվտանգության խորհուրդը արդեն ընդունել է համապատասխան որոշում, համաձայն որի՝ մարդիկ պետք է վերադարձվեն իրենց բնակավայրերը, սակայն առ այսօր ԽՍՀՄ իշխանությունների կողմից այդ ուղղությամբ ոչ մի գործնական քայլ չի արվել: Դա պատճառաբանվում է ադրբեջանական կողմի ներկայացրած, այսպես կոչված, դիմումներով՝ իբր տեղահանված բնակիչները կամովին են լքել բնակավայրերը: Իրականությունը, սակայն, այն է, որ ձեռքիս են այդ մարդկանց դիմումները, որոնցից պարզ երեւում է, որ նրանք ստիպված են եղել ստորագրել ադրբեջանցիների «հրամայած» դիմումները կենքի սպառնալիքի տակ, եւ որ «հոժարակամ» ստորագրություններ հավաքելն ուղեկցվել է բռնություններով ու դաժանություններով:

Ստեղծված իրավիճակում մենք առաջարկում ենք, որպեսզի ուղարկվի որեւէ չեզոք հանձնաժողով՝ լինեն դրանք որեւէ երրորդ հանրապետության պատգամավորներ, ԽՍՀՄ ժողպատգամավորներ, եւ հանդիպի այս մարդկանց հետ, տեղում պարզի նրանց ցանկությունը: Նույն պահանջով իմ եւ ՀՀ Գերագույն խորհրդի մյուս պատգամավորների ստորագրությամբ տեղահանվածների անունից հեռագիր է ուղարկվել Մոսկվա:

Պետք է ասեմ, որ արդեն երեք օր է, ինչ Արցախում են՝ գտնվում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության, ՊԱԿ-ի, պաշտպանության նախարարության բարձրաստիճան ներկայացուցիչները, որոնք, սակայն, առ այսօր ոչ մի հանդիպում չեն ունեցել ոչ բռնագաղթվածների հետ թե Գորիսում, թե Ստեփանակերտում, եւ ոչ էլ Հայաստանի իշխանությունների ներկայացուցիչների հետ:

Հ.- Ձե՞ք կարծում արդյոք, թե տեղահանման կազմակերպիչները հույս ունեն, որ մարդիկ կհոգնեն անօթեւան մնալուց եւ կհրաժարվեն վերադառնալ իրենց տները:

Պ.- Իհարկե, դա այդպես է:

Սակայն, այնուամենայնիվ մարդկանց ճնշող մեծամասնությունն ուզում է անհապաղ տուն վերադառնալ: Կասկածից վեր է նաեւ, որ պետք է ստեղծվեն երաշխիքներ մարդկանց անվտանգությունն ապահովելու համար:

Հ.- Ըստ որոշ տեղեկությունների, մայիսի 20-ի լույս 21-ի գիշերը Հադրութի շրջանում տեղի են ունեցել նոր տեղահանություններ: Ի՞նչ կասեիք այդ մասին:

Պ.- Նման տեղահանությունների մասին մենք տեղեկություններ չունենք, սակայն, պետք է նշեմ, որ շարունակվում են բնակչության նկատմամբ սպառնալիքներն ու ահաբեկչությունը: Պարզ է, որ նախորդ տեղահանությունների կազմակերպիչների նպատակը Հադրութի շրջանի սահմանային մյուս գյուղերը եւս վերջնականապես հայաթափելն է: Այն բանում, որ այսօր կանգվածային տեղահանության փաստեր չկան, մեծ դեր խաղացին Հայաստանի իշխանությունների ձեռնարկած քայլերը, ժողովրդի միասնականությունը, ինչպես նաեւ աշխարհի առաջադեմ ուժերի Հայաստանի հետ համերաշխության եւ կենտրոնի պետական ահաբեկչության քաղաքականության դեմ բողոքի ելույթների ալիքը:

Հարցազրույցը վարեց ԳՈՒՐԳԵՆ ԽՄԺԿՅԱՆԸ